



KOMITAS
SALON FUNÉRAIRE
Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$565 value)

www.komitas.ca   (514) 331-0400



«Մենք կրնանք խնդիրը լուծել, եթէ 96 ժամ մնանք փողոցը եւ մեր կամքը պարտադրենք». Բագրատ Արք. Գալստանեան. Կարգալ էջ 4

ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենյակների համահայկական խորհրդատուական ամփոփում



Կարգալ էջ 4

«Տաուշը յանուն հայրենիքի» շարժումը ստեղծուած կացութեան դէմ պողոտայում է. Յ. Տէր Խաչատուրեան

«Երկրի Հիւրասրահ» պատկերասփռուած յայտագիրը 3 Յունիսին հիւրընկալեց ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը: Զրոյցին ընթացքին ան անդրադարձաւ «Տաուշը յանուն հայրենիքի» շարժումին՝ նշելով, որ Հայաստան կը գտնուի այնպիսի վիճակի մը մէջ, որ այս շարժումը արդէն անխուսափելի էր:

Տէր Խաչատուրեան շեշտեց, որ անկարելի էր անտեսել հայրենիքը մաս առ մաս թշնամիին յանձնելու այս գործընթացը՝ նշելով, որ նոյն ատեն միանգամայն բնական էր շարժումին՝ Տաուշէն ընթացք առնելու հանգամանքը, որովհետեւ Հայաստանի իշխանութիւնները, տեղի տալով Ատրպէյճանի ճնշումներուն, սահմանազատումը եւ սահմանազոծումը սկսան ինքնին Տաուշի մարզէն, ուր կը գտնուին մեր ամէնէն ապահով դիրքերը:

Տէր Խաչատուրեան անդրադարձաւ նաեւ աշխարհաքաղաքական սուր հարցերուն, որոնք պայմանաւորուած են տարածաշրջանին մէջ Թուրքիոյ դերի կտրուկ աճով, որուն իբրեւ արդիւնք կարելի է դիտարկել Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ պահանջատիրութեան հարցերուն մէջ Հայաստանի իշխանութիւններուն ոչ-հետեւողակ ու խուսափողական քաղաքականութիւնը:

Օնթարիոյ վարչապետ Տակ Ֆորսի գլխաւորութեամբ «Հայկական ժառանգութեան ամիս»ը նշուեցաւ Օնթարիոյ խորհրդարանէն ներս



Կարգալ էջ 3



«Հորիզոն»ի հարցազրոյցը Քեպլէքի Ազգային Ժողովի անդամ Սոնա Լախոյեան Օրիվիէի հետ. Կարգալ էջ 3



Լաւալի մէջ նշուեցաւ Լաւալի Քաղաքապետարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման 25-ամեակը. Կարգալ էջ 6



MAZDA GABRIEL ANJOU

THE ALL-NEW 2024 MAZDA CX-5

Kevork Asadourian
General Manager

7050, boul. Henri-Bourassa Est.
Anjou, QC H1E 7K7
Tél. : 514 328-7777
mazdagabrielanjou.ca



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղին աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Օնթարիոյի վարչապետ Տակ Ֆորտի գլխավորութեամբ «Հայկական Ժառանգութեան ամիս»ը հանդիսաւորապէս նշուեցաւ Օնթարիոյի խորհրդարանէն ներս

Երկուշաբթի, 27 Մայիս 2024, կէսօրէ ետք ժամը 5:00-ին Օնթար-իոյի Նահանգի խորհրդարանէն ներս՝ Օնթարիո խորհրդարանի անդամ Արիս Պապիկեանի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ «Հայկական Ժառանգութեան ամիս» խորագրով ձեռնարկը:

Հանդիսութեան ներկայ էին Օնթարիո նահանգի վարչապետ Տակ Ֆորտ, 30-է աւելի նախարարաներ, երեսփոխաններ, Օնթարիոյի երեք Ընդհանուր Կուսակցութեանց ներկայացուցիչներ: Ներկայ էր նաեւ Գերաշնորհ Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեան՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Գանատահայոց Թեմի Առաջնորդ, ինչպէս նաեւ Թորոնթոյի Հայ Համայնքի կրօնական, քաղաքացիական առաջնորդներ, Միսիսսագա, Գեմպրի, եւ Սանթ Քաթրինայի շրջաններու Հայ Համայնքներու ներկայացուցիչներ, քաղաքական, հասարակական գործիչներ, կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ակադեմիկոսներ, ինչպէս նաեւ ժողովուրդի մեծ բազմութիւն:

Ձեռնարկին ներկայ էին Թորոնթոյի յոյն հիւպատոս Բանայիթիս Անթոնիոս, Լիբանանի Հանրապետութեան Թորոնթոյի մօտ պատուոյ հիւպատոս Գրիգոր Փոսթաճեան եւ այլազան բազմաշահութային փոքրամասնութիւններու ներկայացուցիչներ՝ յոյն, չինացի, դպրի, եւ գլտան:

Օրուան հանդիսավար Արիս Մովսէսեան, բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, բեմ հրաւիրեց երեսփոխան Արիս Պապիկեանը, որ իր կարգին շնորհակալութիւն յայտնեց Օնթարիոյի վարչապետ Ֆորտին եւ նախա-

րարներուն, իրենց աջակցութեան ու օժանդակութեան համար, յայկապէս թիւ 105 օրինագիծին եւ այլ օժանդակութիւններուն որոնք տրամադրուեցան Հայ գաղութին:

Վարչապետ Տակ Ֆորտ իր խօսքին մէջ ջերմօրէն գնահատեց երեսփոխան Արիս Պապիկեանը, որ անցնող վեց տարիներու ընթացքին իր գործունէութեամբ՝ սերտ յարաբերութիւններ մշակեց թէ՛ Համայնքներու եւ թէ՛ պետական կառոյցներու հետ: Ան կարեւորութեամբ անդրադարձաւ Հայ գործարարներու դերակատարութեան եւ նախաձեռնութիւններուն, որոնք գործ կը Հայթայիին Հայ գաղութի զաւակներուն եւ Օնթարիոյի բնակիչներուն: Իր խօսքի աւարտին՝ վարչապետը իր անսակարկ աջակցութիւնը յայտնեց Օնթարիոյի Հայ Համայնքին:

Հանդիսութեան մասնակից Օնթարիոյի Մշակոյթի եւ Քաղաքացիութեան նախարար Մայքըլ Ֆորտ իր արտասանած խօսքին մէջ կարեւորութեամբ ընդգծեց Գանատահայ Համայնքի ներդրումը Գանատայի մշակոյթի իւրապատու դիմագիծի պահպանման կապակցութեամբ: Նախարար Մայքըլ Ֆորտ նշեց, որ աշխարհի չորս ծագումը ունէր Հայերը մեծ շուքով կը տօնեն Մայիս 28-ը՝ Հայաստանի անկախութեան 106-ամեակը: Ան դիտել տուաւ, որ այս տարուան տարեգարձը՝ Հայ ժողովուրդի ազատութեան, ժողովրդավարութեան եւ ինքնորոշման խորհրդանիշն է: Նախարար Մայքըլ Ֆորտի խօսքին յաջորդեց Օնթարիոյի երեք ընդհանուր կուսակցութեանց ներկայացուցիչներու արտի խօսքերը:

Հանդիսավար Արիս Մովսէսեան բացատրեց, որ թիւ 105 օրինագիծը՝ իւրաքանչիւր տարուան Մայիս ամիսը պիտի ճանչնայ որպէս «Հայկական Ժառանգութեան Ամիս»: Օնթարիոյի խորհրդարանի վերոնշեալ օրինագիծը իրականացաւ շնորհիւ Օնթարիո նահանգի խորհրդարանի Աբգար-Էյ-Գիւրջի շրջանի երեսփոխան Արիս Պապիկեանի շնորհիւ: Օնթարիոյի Օրէնսդիր Ժողովը Գանատայի առաջին օրէնսդիր մարմինն է, որ ընդունեց նման օրէնք՝ յարգելու եւ յարգանքի տուրք մատուցելու Օնթարիոյի մէջ բնակող Հայերուն, իրենց գործօն դերակատարութեան ու ներդրումին Գանատայի մշակոյթի իւրապատու դիմագիծի պահպանման կապակցութեամբ:

Այս առիթով երեսփոխան Պապիկեան պատրաստած էր գրքոյկ մը, որ կը բովանդակէ Հայերու Գանատաներգալթի ժամանակագրութիւնը, Օնթարիո նահանգին մէջ Հայ Համայնքի հաստատման պատմագրութիւնը, հայերու նշանակալի ներդրումը նահանգի ընկերային, մշակութային, կրթական, տնտեսական եւ քաղաքական հաստատութիւններուն մէջ, ինչպէս նաեւ արուեստի, դիտութիւններու եւ գրականութեան մարգերէն ներս: Գրքոյկը կը ներառէ նաեւ Հայոց ցեղասպանութիւնը, ճորձթառնի Հայ որբերու մարդասիրական առաքելութիւնը, գանատացիներուն աջակցութիւնը Հայ ժողովուրդին, դաշնակցային օրէնսդիր եւ գործադիր մարմիններու կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը եւ Գանատայի նիւթական օժանդակու-

թիւնը ցեղասպանութենէն վերապրողներուն:

Ձեռնարկի աւարտին երեսփոխան Արիս Պապիկեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նպաստեցին ձեռնարկի կազմակերպական աշխատանքին եւ յաջողութեան, եւ բոլոր մասնակիցներուն, որոնց շնորհիւ կարելի եղաւ յաջողցնել այս ծրագիրը: Ան շնորհակալութիւն յայտնեց եւ բարձր գնահատեց նուիրատուները: Հայկական ճաշեր հովանաւորուած էին Նազար Չաթախեանի կողմէ (Lavash Restaurant): Անուշեղէնները՝ Յարութ Սարգիսեանի կողմէ Ալ Նեմէ (Alnejmah Fine Foods): Համեղ տուրմեր, Հայկական անուշներ եւ օշարակներ՝ Անուշ Մարքէթի կողմէ (Anush Market): Հայկական խմիչքները՝ Վլատիմիր Կուզմանի կողմէ: Տիկին Նուշիկ Թահթէճեան եւ երկու դուստրերը իրենց զեղեցիկ Հայկական տարագներով փայլե տուին ձեռնարկին: Տիկ. Յասմիկ Խրաքեան Հայկական տոնմիկ կահաւորումն ու Արցախեան գորգեր տրամադրած էր: Շնորհակալութիւն յայտնուեցաւ նաեւ Նոր Հայ Հորիզոնի անձնակազմին եւ վարիչ տնօրէն Սիւզի Մելիքոնեանին:

Աւարտին՝ ներկաները բարձր գնահատեցին ձեռնարկը, որուն նպատակն էր Հայ մշակոյթն ու պատմութիւնը ծանօթացնել օտար շրջանակներուն, ինչպէս նաեւ Հայ Համայնքի ներկայացուցիչները մօտէն ծանօթացնել Օնթարիոյի պետական անձնակազմը թիւններուն եւ քաղաքական գործիչներուն:

Պէթթի Տողրամաճեան

Քեպէզի Ազատական կուսակցութիւնը կը խոստանայ Յեղասպանութեանց ուսուցումը պարտադիր դարձնել, երբ իշխանութեան գայ յառաջիկայ ընտրութիւններուն. Ծովտի շրջանի երեսփոխան Սոնա Լախոյեան Օլիվիէ

Մայիս 25-26 շաբաթավերջին, Պրոմոնի մէջ, Քեպէզի Ազատական կուսակցութիւնը ունեցաւ իր Ընդհանուր խորհուրդի նիստը, որուն ընթացքին որոշում կայացուց Յեղասպանութեանց ուսուցումը Քեպէզի երկրորդական վարժարաններուն մէջ պարտադիր դարձնելու մասին, եթէ իշխանութեան գայ Քեպէզի նահանգային յառաջիկայ ընտրութիւններուն: Այս մասին «Հորիզոն»-ի հետ հանդիպման ընթացքին յայտնեց Քեպէզի խորհրդարանի անդամ, Ազատական կուսակցութեան երեսփոխան Սոնա Լախոյեան Օլիվիէն: Նշեց, որ Քեպէզի կրթական համակարգը կը ներառէ Յեղասպանութեանց ուսուցումը Քեպէզի դպրոցներէն ներս, որուն համար դասագիրքեր ալ պատրաստուած են, սակայն պարտադիր չէ:

Երեսփոխան Սոնա Լախոյեան Օլիվիէ «Հորիզոն»-ի հետ իր հարցազրոյցին ընթացքին նշեց, որ կուսակցութեան Ընդհանուր խորհուրդի երկօրեայ նիստերուն թեման տնտեսութիւն եւ ելեմտական կառավարումն էր, սակայն Ազատական կուսակցութեան անդամի մը կողմէ ներկայացուած է բանաձեւ մը, որուն մէջ առաջարկուած է հրէական ողջակիզման (Հոլոքոստ) դասաւանդման պարտադիր ուսուցումը Քեպէզի կրթական համակարգին մէջ: Երեսփոխան Լախոյեան Օլիվիէ յայտնեց, որ ինք անմիջապէս հակադարձելով այս բանաձեւին, առաջարկած է բարեփոխել գայն՝ հրէական Հոլոքոստի ուսուցումը չափազանց «սահմանափակուած» բնորոշելով: Երեսփոխանը առաջարկած է բոլոր Յեղասպանութեանց ուսուցումը ընդգրկելու մասին՝ ներառելով Հայոց Յեղասպանութիւնը, ի շարս ուրիշ Յեղասպանութիւններու՝

Հոլոքոստին, ռուսականին, Քամպուտականին, Ուրուգուայականին ու մինչեւ իսկ Ամերիկեան ցամաքամասի բնիկ ժողովուրդներունը:

Նիստերուն ընթացքին, երեսփոխան Սոնա Լախոյեան Օլիվիէի միջամտութեամբ բանավէճ տեղի ունեցած է նշեալ բանաձեւին շուրջ: Անոնք յայտնած են, թէ Գանատայի երեք նահանգներ՝ Պրիթիլ Գոլոմպիա, Օնթարիո եւ Ալպերթա, նաեւ ԱՄՆ-ի 13 նահանգներ արդէն վաւերացուցած են այս առաջարկը, հետեւաբար կոչ ուղղած են, որ այս բանաձեւով կարելի ըլլայ գայն իրագործել Քեպէզ նահանգին մէջ եւս: Մէկ օրուան տեսողութեամբ բանակցութիւններ կատարած է երեսփոխան Օլիվիէ, որպէսզի հրեաներու կողմէ առաջարկուած բանաձեւը ընդգրկէ բոլոր ցեղասպանութիւնները, ապա բանաձեւը վերատեսութեան ենթարկուած է երեսփոխան Լախոյեան Օլիվիէի կողմէ, որուն հիմամբ նիստերու աւարտին բանաձեւին մէջ նշեալ Հոլոքոստը փոխարինուած է «Յեղասպանութիւն» բառով: Ան յայտնեց, որ երկրորդ օրուան նիստին ինք ներկայացուցած է բարեփոխուած բանաձեւը, եւ նախորդ օրուան բանակցութիւններուն շնորհիւ, որոնց ընթացքին ան համոզիչ բացատրութեամբ բանակցած էր ներկաներուն հետ, եւ որուն որպէս արդիւնք ժողովը միաձայնութեամբ ընդունած է գայն: Հետեւաբար Ազատական կուսակցութիւնը, եթէ յառաջիկայի նահանգային խորհրդարանական ընտրութիւններուն իշխանութեան գայ, ըստ նշեալ բանաձեւին, կը խոստանայ Յեղասպանութեանց ուսուցումը դարձնել պարտադիր Քեպէզի վարժարաններէն ներս:

Երեսփոխանը բանաձեւին մասն-

րամասնութիւններուն անդրադառնալով յայտնեց, թէ Յեղասպանութեանց ուսուցումը նկատի առնուած է երկրորդական տարիներուն դասաւանդութեանց համար, սկսեալ օրագրող դասարանէն (երկրորդականի առաջին տարին), եւ որուն համար կ'առաջարկուի Մոնթրէալի մէջ Հոլոքոստի թանգարանին կողմէ պատրաստուած ուղեցոյցը օգտագործել: Բանաձեւը կ'ընդգրկէ նաեւ Քեպէզի կառավարութեան կողմէ յատուկ ծրագրով մը օժանդակել ուսուցիչներուն այս դասանիւթին առնչութեամբ վերապատրաստուելու հարցով: Բանաձեւը կ'առաջարկէ նաեւ աշակերտներուն համար այցելութիւն նախաձեռնել Յեղասպանութեան թանգարաններ, ինչպէս՝ Մոնթրէալի Հոլոքոստի թանգարանը, որպէսզի կարենան համապարփակ գաղափար կազմել պատմութեան ընթացքին կատարուած ցեղասպանութիւններուն մասին:

Երեսփոխանը յայտնեց, թէ նիստին ընթացքին անդրադարձ կատարուած է Յեղասպանութեանց դասաւանդման կարեւորութեան, որովհետեւ ապացուցուած է, թէ ցեղասպանութեան մասին դասաւանդումը կը նպաստէ աշակերտներուն քննական եւ քննադատական մտածողութեան եւ մանաւանդ կը ստարէ սերունդները այնպէս մը դաստիարակելու, որպէսզի չհրկնուին անցեալի սխալները: Ան ըսաւ, թէ երեսփոխանը չի փոխանցուիր աշխարհի ամբողջական պատմութիւնը եւ թէ պատմութեան լիբրալ դասաւանդումը ընդհանուր կրթութեան մաս կը կազմէ, ներառեալ ցեղասպանութիւնները:

Երեսփոխան Լախոյեան Օլիվիէ

չեղտեց նաեւ կարեւորութիւնը Հայ երեսփոխաններ ունենալու քաղաքական բոլոր մակարդակներուն վրայ եւ բոլոր ոլորտներէն ներս, որոնց միջոցաւ կարելի կ'ըլլայ նման բանաձեւերու ընդունումն ու ի հարկին բարեփոխումը՝ ի նպատակ մեր ժողովուրդին ու մեր Դատին: Հետեւաբար նահանգային թէ՛ դաշնակցային խորհրդարաններուն մէջ երեսփոխաններ ունենալը չափազանց էական է, ինչպէս նաեւ Հայ Դատի յանձնախումբերուն հետ անոնց համագործակցութիւնը, ի խնդիր հայութեան շահերու հետապնդման, յատկապէս, որ Հայ Դատի յանձնախումբը ունեցած է իր ներդրումն ու մասնակցութիւնը Հոլոքոստի թանգարանի ուղեցոյցի պատրաստման մէջ՝ ներառելով Հայոց Յեղասպանութիւնը եւս:

Երեսփոխան Լախոյեան Օլիվիէ կը շեղտէ նաեւ, որ որքան ալ Հայ ժողովուրդը պաշտպանէ իր դատը եւ որքան ալ Հայ Դատի յանձնախումբերը բազմապիսի աշխատանքներ տանին, հիմնական գործօն է երեսփոխաններ ունենալը քաղաքական բոլոր մակարդակներուն վրայ, որպէսզի մօտէն հետապնդուին մեր Դատի շահերն ու առաջ մղուին մեր առաջարկները: Ան նշեց, թէ անցնող երկու տարիներուն ընթացքին Քեպէզի նահանգային խորհրդարանը երկու բանաձեւ միաձայնութեամբ ընդունած էր Արցախի առնչութեամբ. մէկը 2023-ի Փետրուարին՝ Լաչինի միջանցքի փակման առնչութեամբ, իսկ միւսը՝ 2023-ի Հոկտեմբերին՝ Ատրպէյճանի կողմէ Արցախի հայթափումը դատապարտող:

Սոնա Թիթիզեան Կեպիկեան

«Մենք կրնանք խնդիրը լուծել, եթե վաղուցն սկսեալ ընդամենը 96 ժամ առանց դադարի մնանք փողոցը եւ մեր կամքը պարտադրենք» շեշտեց Բագրատ Արք. Գալստանեան

Կիրակի, 9 Յունիսին, Հանրապետութեան հրապարակին մէջ տեղի ունեցաւ «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժման ղեկավար Բագրատ Արք. Գալստանեանի հրաւիրած համագումարին հանրահաւաքը:

Մինչեւ հանրահաւաքի սկսելը երիտասարդները Սասունցի Դաւիթ կայարանի, Հրազդան մարզադաշտի եւ Մատենադարանի յարակից տարածքներէն երթով միացան հրապարակին մէջ հաւաքուած բազմահազար քաղաքացիներուն:

Հանրահաւաքը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգով եւ Տէրունական աղօթքով:

Մեծ պաստառի վրայ ցուցադրուեցաւ ոստիկանական վայրագութիւնները յիշեցնող տեսանիւթ:

«Այս ժամանակաշրջանին իշխանութիւնները բազմաթիւ միջոցներով կը ճնշեն մարդոց վրայ, ատիկա կրնայ դրսեւորուիլ մատ թափ տալէն սկսած մինչեւ կալանաւորում: Ունինք քաղաքական բանտարկեալներ, որոնք երկար ժամանակ է բանտ նստած են», իր ելոյթի ընթացքին յայտարարեց փաստաբան Ռուբէն Մելիքեան:

Անդրադառնալով արտաքին գործոց նախարարութեան շէնքին դիմաց ոստիկաններու կողմէ քաղաքացիներու նկատմամբ բիրտ ուժ գործադրելուն՝ փաստաբանը ըսաւ. «Քանի տակաւին մէկ ոստիկան է կանչուած պատասխանատուութեան, քաղաքացիներու նկատմամբ որեւէ գործողութիւն, ներառեալ ձեռքարկում եւ կալանաւորում, ապօրինի է, քանի որ տարբերակուած մօտեցում կը կիրարկուի»:

«Հինգ իրուակաշտ պայաններու անունով կ'ուզենք կարծիր պերեթ նուիրել մարդու իրաւունքներու պաշտպանին, որովհետեւ ան հիանա-

լի կը պաշտպանէ կարծիր պերեթներու իրաւունքը» ըսաւ Ռուբէն Մելիքեան՝ աւելցնելով, որ այսօր անիկա անպայման կ'առաքուի Անահիտ Մանասեանին:

«Իմաստ չունի իմ ուսանիլս, եթէ յետոյ պէտք է դառնամ թուրքի կիրթ ստրուկը: Մենք՝ ուսանողներս, կը գիտակցինք աւելին, քան կը թուի շատերուն: Վերջին հինգ տարիներուն մենք շատ բան հասկցանք: Շատ ժամանակ դժուար էր կոչմորոշուիլ՝ փողոց դուրս գալ: մտնել պայքարի մէջ, բայց այսօր մեզի այլ ճանապարհ չեն ձգած: Մենք յաղթանակի սերունդ ենք, եւ մեր յաղթանակը պէտք է շարունակական ըլլայ: Մենք համաձայն չենք ապրելու պարտուողի հոգեբանութեամբ: Ես այստեղ եմ, որ ունենամ ամուր պետութիւն, որ պէտքի կառուցած իմ ապագաս արժանապատիւ երկրի մէջ, ստիպուած չըլլամ արտագաղթել այլ երկիր», իր խօսքին մէջ ըսաւ Երեւանի պետական համալսարանի ուսանող Արման Սարգսեան, որ պայքարի օրերուն նոյնպէս տուժած էր ոստիկաններու բռնի գործողութիւններուն պատճառով:

Հանրահաւաքի ժամանակ ցուցադրուեցաւ տեսանիւթ, թէ ի՞նչ կը նշանակէ «Սրբազան պայքար»-ի տարբերանշանը:

Թրքագէտ Վարուժան Գեղամեան իր ելոյթին մէջ նշեց. «Մէկ ամիս է, որ Թուրքիոյ եւ Ազրբայճանի մէջ ուշագրի կը հետեւին Հայաստանի մէջ տեղի ունեցող գործընթացներուն: Ձեր պայքարին կը հետեւին անհանգստացած, որ յանկարծ այստեղ փոփոխութիւն մը չպատահի»:

«Բացի անկէ, որ կ'անհանգստանան, ձեր սկսած պայքարին պատճառով Թուրքիոյ մէջ կը հրաւիրեն անվտան-

գութեան խորհուրդի նիստ, որովհետեւ Հայաստանի մէջ իշխանափոխութիւնը ձեռնտու չէ իրենց շահերուն», ըսաւ Գեղամեանը՝ աւելցնելով, որ իրենք կ'անհանգստանան, որովհետեւ գիտեն՝ բոլորիս պայքարը պիտի յանգեցնէ ոչ թէ թրքական, այլ՝ հայկական խաղաղութեան:

Բագրատ Արք. Գալստանեանը յայտարարեց, թէ կեղծ են բոլոր թեզերը, որ այսօր պատերազմ գոյութիւն չունի, եւ իբրեւ թէ մենք պիտի նպաստենք անոր վերսկսման:

«Սա մեծագոյն կեղծիքն է, քանի որ պատերազմ բերած իշխանութիւնը չի կրնար պատերազմ աւարտել: Լաւագոյն պարագային անիկա մեզի պիտի տանի ամբողջական ինքնայանձնման, մեր հայրենիքի, պետութեան եւ ինքնութեան կորուստով: Պատերազմը չէ աւարտած: Անիկա կը շարունակուի այս յանցաւոր սահմանազատման եւ սահմանազածման տեսքով», ըսաւ Սրբազանը:

«Անցումային կառավարութիւնը պիտի պատրաստուի արտահերթ ընտրութիւններու՝ առանց անոնց մասնակցելու», յայտարարեց Բագրատ Սրբազանը:

Ան նշեց, թէ անցումային կառավարութիւնը օրակարգային երեք ուղղութիւններով պիտի աշխատի.

- ա) Հաշտութեան կառավարութիւն վերկուսակցական սկզբունքով՝ կազմուած բոլոր ունակներէն՝ իրենց մասնագիտական վաստակով, գիտելիքներով եւ նուիրումով: Ներքին հաշտութեան՝ արդարութեան սկզբունքի վրայ:
- բ) Արտաքին յարաբերութիւններ՝ իրական խաղաղութեան, առանց հակահերթ, հայկական օրակարգով:
- գ) Սահմանուած ժամկէտի մէջ

արտահերթ կամ հերթական ընտրութիւններու նախապատրաստում եւ կայացում՝ առանց յաւանդութիւն ունենալու մասնակցելու այդ ընտրութիւններուն՝ ազատ ու թափանցիկ միջավայր եւ մեկնարկային արդարութիւն ապահովելով բոլոր քաղաքական ուժերուն համար:

Բագրատ Սրբազանը յայտարարեց շարժման յառաջիկայ օրերու ընելիքները եւ պահանջները:

«Կը դիմեմ Ազգային ժողովի բոլոր խմբակցութիւններուն.

Քայլ 1. Մեր պահանջով Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամաւորները կը նախաձեռնեն խորհրդարանի արտահերթ նիստ 11 Յունիսին՝ ժամը 18:30-ին, կառավարութեան հրաժարականի եւ նոր կառավարութիւն ձեւաւորելու օրակարգով:

Քայլ 2. 10 Յունիսին Ազգային ժողովի խորհուրդը ժողովուրդի որոշումով պարտաւոր է ընդունիլ որոշում արտահերթ նիստ հրաւիրելու մասին, քաղաքական մեծամասնութիւնը՝ ՔՊ-ական պատգամաւորները, պարտաւոր են ենթարկուիլ ժողովուրդի կամքին, գործել անձնական խիղճով եւ համոզմունքով: Մեր ներկայութեամբ մենք անոնց թոյլ պիտի չտանք հերթական հակապետական սխալ գործել:

Քայլ 3. Համաժողովրդական պահանջի հիման վրայ խորհրդարանը իր արտահերթ նիստով հաւանութիւն կու տայ գործող կառավարութեան հրաժարականի եւ նոր կառավարութիւն ձեւաւորելու որոշումին»:

«Խաղալու ժամը չէ, պէտք է գործել», յայտարարեց Սրբազանը:

Հանրահաւաքի աւարտին Հանրապետութեան հրապարակէն սկսաւ երթ՝ Ամիրեան, Մաշտոց եւ Բաղրամեան փողոցներով:

ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենեակների համահայկական խորհրդաժողովի ամփոփում

Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի հրաւերով, Մայիսի 25-28-ը Հայաստանում գումարուեց ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենեակների համահայկական խորհրդաժողով՝ շուրջ քսան երկրներից ժամանած ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենեակների պատասխանատուների մասնակցութեամբ:

Խորհրդաժողովը լսեց ՀՅԴ Հայ Դատի համաշխարհային ցանցի աշխատանքների ամփոփումները նախորդ՝ 2021 թ. Դեկտեմբերի խորհրդաժողովից առ այսօր, քննարկեց Արցախի հայաթափումից ու դրանով պայմանաւորուած զարգացումների վերաբերեալ տարբեր գեկոյցներ, կատարեց գործունէութեան հիմնական ուղղութիւնների եւ քաղաքական առաջնահերթութիւնների մարտավարական բնոյթի փոփոխութիւններ՝ առաջիկայ գործունէութեան համար:

Խորհրդաժողովն արժեւորեց պատերազմական եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների համար մի շարք երկրներում ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբերի կողմից սկսուած՝ պատժամիջոցների կիրառմանն ուղղուած աշխատանքները եւ ընդունեց որոշում՝ այն շարունակելու նոր թափով ու աշխարհագրական առաւել լայն ընդգրկմամբ:

Խորհրդաժողովը քննարկեց այն հիմնական ուղղութիւններն ու հնարա-

ւորքայլերը, որոնք, հաւանաբար, ձեռք կ'առնի Ատրպէյճանն՝ իր միջազգային հեղինակութեան բարձրացման եւ պատերազմական յանցագործի պիտակից խուսափելու համար: Անդրադառնալով այս հարցին՝ խորհրդաժողովն ընդունեց համապատասխան որոշումներ:

Առհասարակ, շարունակուելու են ատրպէյճանական յանցագործութիւնների միջազգային հանրահոշակումն ու դրանց վերաբերեալ քաղաքական, հասարակական ու իրաւապաշտպան շրջանակների իրազեկուածութեան բարձրացման աշխատանքները:

ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբերն ամէնօրեայ ռեժիմով հետապնդելու են Պաքուում պահուող հայ գերիների՝ այդ թւում Արցախի Հանրապետութեան ռազմաքաղաքական ղեկավարութեան տուճարձի խնդիրը:

Խորհրդաժողովի մասնակիցները, հաշուի առնելով նաեւ իրենց աշխատանքի արդիւնքում ստացած տեղեկութիւնները, մէկ անգամ եւս արձանագրեցին՝ լուծուած չէ Դարաբաղեան հակամարտութիւնը: Ուստի, Հայ Դատի ցանցը շարունակելու է հակամարտութեան եւ դրա առաւել ծանրացած եւ խորացած հանգամանքների միջազգային հանրահոշակումը՝ առաջնահերթութիւն համարելով Արցախի ժողովրդի հաւաքական ու միջազգային ամբողջական երաշխաւորութեամբ վերադարձի իրաւունքի իրացումը:

Խորհրդաժողովում քննարկուեցին նաեւ Արցախի հոգեւոր եւ նիւթական մշակութային ժառանգութեան պահպանման խնդիրները: Դրան ուղղուած որոշակի գործողութիւնների վերաբերեալ ընդունուել են որոշումներ, որոնք ենթադրում են համագործակցութիւն ինչպէս հայկական, այնպէս էլ միջազգային կազմակերպութիւնների եւ առանձին պետութիւնների հետ:

Յատուկ քննարկման են արժանացել Հայաստանի Հանրապետութեան գործող իշխանութիւնների վարած արտաքին քաղաքականութիւնը եւ այդ քաղաքականութեան բացասական հետեւանքներին դիմադրաւելու հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ «Տաւուշը յանուն Հայրենիքի» շարժման արտաքին ճակատում լուսաբանելու քայլերը:

Խորհրդաժողովի ընթացքում քննարկուել են նաեւ տեղերում Հայ Դատի յանձնախմբերի կարողականութիւնների զարգացմանը, համայնքային կապերի ամրապնդմանն ու երիտասարդութեան ներգրաւմանը վերաբերող հարցեր:

Խորհրդաժողովը, Մայիսի 28-ի ուշ երեկոյեան իր աշխատանքներն աւարտեց Ամենայն Հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.-ի հետ հանդիպմամբ ու Նորին Սրբութեան օրհնութեամբ:

Մայիսի 29-ին գումարուեց ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի կեդրոնական խորհրդի նիստը, որը ճշգրեց խորհրդաժողովի որոշումների իրագործմանն ուղղուած աշխատանքային ծրագիրը:

ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի կեդրոնական գրասենեակ



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ ՅԱՐԿԱՐԳՈՅՆ ԳԻՆԵՐ

***Նոր Հասցէ՝**
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676
Email info@haigravel.ca

Iran's interim government rejects Baku's 'corridor' plan through Armenia

TEHRAN—Official Tehran reiterated Iran's long-standing opposition to Baku's proposed land "corridor" through Armenia that would connect Azerbaijan-proper with Nakhichevan and thus Turkey.

Iran's acting Foreign Minister Ali Bagheri Kani told CNN Turk that while his country support normalization of relations between Armenia and Azerbaijan, it will not support changes to regional borders.

"The Iranian side supports all initiatives that will help the development of the region, in particular, the Armenian-Azerbaijani settlement. However, Tehran is against any project and initiative that will change the demographics and borders of the region," Bagheri Kani emphasized when asked directly about the so-called "corridor" proposal.

In other Iran-relate news,

the country's foreign ministry also reaffirmed an earlier decision for Armenia to open a consulate in Tabriz, in Iran's Azerbaijan province.

The foreign ministry spokesperson Nasser Kanani told reporters on June 3 that Iran and Armenia have signed an agreement on mutual opening of their consulates general in Tabriz and Kapan, the state IRNA news agency reported.

He added that Iran's consulate general was officially opened during the visit of the late Iranian Foreign Minister Hossein Amir-Abdollahian, who died last month in a helicopter crash along with Iran's president, Ebrahim Raisi.

Kenani, speaking on behalf of the interim government of Iran, said his country had granted consent to Yerevan for the opening of an Armenian Consulate in Tabriz.

Russian Ambassador returns to his post in Yerevan

MOSCOW—After being recalled to Moscow last month, Russia's Ambassador to Armenia Sergei Kopyrkin returned to his post in Yerevan on June 10.

The Russian foreign ministry recalled Kopyrkin from Yerevan on May 24 after Prime Minister Nikol Pashinyan publicly claiming that two member-states of the Russia-led Collective Security Treaty Organization were overtly supporting Azerbaijan during the 2020 Artsakh War. From Pashinyan's statements at the time, it could be inferred that he was referring to Russia and Belarus.

Galuzin, on June 6, told reporters that Kopyrkin would return to his post, adding that the recall "for consultations" was a routine diplomatic step taken by various countries.

"There is no issue of breaking ties with Yerevan," Galuzin said last week. "Calling the ambassador from a post for consultations is a common diplomatic practice."

Galuzin also categorically rejected that relations between Yerevan and Moscow had declined. "There is absolutely no such thing," he said last week.

Russia's deputy foreign minister was more critical of Yerevan's recent advancement of relations with the West, telling the Tass news agency that the Armenian government's decision to distance itself from the CSTO had adversely impacted plans to create a security zone in the region.

Galuzin told Tass last week that Yerevan's "thoughtless steps" may make the joint ef-

orts of Moscow and the CSTO to create a single defence system impossible, blaming Yerevan for advancing relations with the West.

"Yerevan is taking advantage of the current situation when the West is showing great interest in strengthening cooperation, including in the security sector," Galuzin said in the interview.

"However, thoughtless decisions that will provide Westerners with full access to national databases, sensitive information for the country's security, not only threaten the sovereignty of the state, but may also make it objectively impossible to return to the joint efforts of Russia and other CSTO allies toward building a single defence area," Galuzin emphasized, warning Armenia against leaving the Russia-led security bloc.

Prime Minister Nikol Pashinyan announced earlier this spring that Armenia would freeze its members to the CSTO. Armenia's foreign and defence ministers have opted to not attend recent ministerial summits of the organization.

Parliament rejects Opposition demands for debate on Pashinyan's resignation

YEREVAN—Amid continuing antigovernment protests in Yerevan, the Armenian opposition moved on June 10 to force an emergency parliament debate on its demands for the resignation of Prime Minister Nikol Pashinyan and his cabinet.

The opposition Hayastan and Pativ Unem alliances petitioned the leadership of the National Assembly to convene such a session as protesters led by Archbishop Bagrat Galstanyan occupied a section of the city's Marshal Bagramian Avenue adjacent to the parliament building. They set up a tent camp there early in the morning after security forces prevented them from marching through another street located closer to the building.

The opposition lawmakers want the parliament to debate and approve by June 17 a resolution saying that Pashinyan's government must quit because it "has failed the defence, security and territorial integrity" of Armenia, left the country's sovereignty "under immediate threat" and must be replaced by experienced professionals trusted by the public. Hayastan's Artsvik Minasyan stressed that the proposed measure is not a vote of no confidence in the government which was demanded by Galstanyan at the start of his month-long campaign for regime change.

The parliament leadership dominated by pro-government lawmakers rejected the initiative later in the day. Speaker Alen Simonian insisted that Pashinyan and his political team still enjoy popular backing.

The parliamentary statutes stipulate that an emergency session must take place if it is demanded by at least 27 members of the 107-seat legislature. Hayastan and Pativ Unem collected 33 signatures in support of the debate, meaning that it has to be scheduled for June 17 at the latest.

However, the parliamentary majority can scuttle the debate by boycotting it and preventing the National Assembly from making a quorum. Hayk Konjoryan, the parliamentary leader of Pashinyan's Civil Contract party, made clear that he and his pro-government colleagues will do just that.

Opposition lawmakers said that despite the parliamentary majority's stance they hope to succeed in forcing the debate.

"Many things will happen before June 17," said Hayk Mamijanin, the Pativ Unem leader.

For his part, Minasyan said Armenians should take to the streets in large numbers in

order to force the ruling majority to obey "the will of the people."

"It's important that the people's demand be so powerful that they show up for that session," he told protesters camped out on Marshal Bagramian Avenue.

Galstanyan discussed his further actions with these and other opposition leaders who reaffirmed support for his protest movement. The outspoken cleric announced afterwards that the street sit-in will continue and culminate in a major rally in the same location on June 12. It will be an "extremely important day," he said, urging supporters to turn out in force.

"With our presence here on June 12, we can change a lot in our life," the protest leader added without elaborating.

The parliament is due to hold regular sittings, including a question-and-answer session with Pashinyan and government ministers, on June 11 and 12.

Thousands of protesters marched to the Armenian parliament late on June 9 as Galstanyan tried to step up his month-long campaign for Pashinyan's resignation.

Riot police did not allow them to get close to the parliament building from Marshal Bagramian Avenue, sparking bitter verbal exchanges between Galstanyan and senior police officers at the scene. Although the tensions eased afterwards, the standoff continued, with the protest leader and most of the demonstrators trying to approach the building from another direction shortly after midnight. There too they were stopped by lines of police officers.

Several opposition parliamentarians accompanying Galstanyan also failed to get through the police cordon. Some of them argued and jostled with security forces, accusing the latter of illegally denying them entry to their parliamentary offices. Security forces reluctantly allowed them to enter the building an hour later. At least three other protesters were reportedly detained on the spot during the brief scuffle.

"We will stand here as long as necessary," Galstanyan said after condemning the "illegal" police actions.

The protesters did not disperse despite heavy rain that began at around 2 a.m. local time. Many of them spent the night on Marshal Bagramian Avenue, with organizers of the action pitching tents there. They remained camped out on the street.

Continued on page E2

Lemkin Institute calls on UN to withdraw Azerbaijan as Climate Summit host

NEW YORK—The Lemkin Institute for Genocide Prevention called on the United Nations to withdraw its support for Azerbaijan to host the 2024 Climate Summit, know as COP29.

In a rare agreement between Armenia and Azerbaijan in December, Yerevan agreed to not oppose Azerbaijan's bid to host the international climate summit in exchange for return of Armenian political prisoners being illegally held in Baku.

Following the deal, Azerbaijan released 32 Armenian captives, with many more still remaining in Azerbaijani prisons, including the former leaders of Artsakh, whose pre-trial detention keeps getting extended by courts in Baku, despite international calls for their return.

In its statement issued on June 6, the Lemkin Institute said cited Azerbaijan's genocidal actions in Artsakh, as well as Azerbaijani President Ilham Aliyev's armenophobic policies, and the extensive corruption and human rights abuses at

home, as the reason for its appeal to the UN.

"By granting Azerbaijan the honour of hosting this important event, the UN is endorsing genocidal speech, genocidal policies, and dictatorship, which benefits neither the climate nor the people of the world," the Lemkin Institute said.

"The choice of Azerbaijan as COP host legitimizes, rationalizes, and normalizes genocide in world politics. Furthermore, it threatens the credibility of the principles established by the United Nations Framework Convention on Climate Change. In the interests of genocide prevention, human rights, and the legitimacy of the United Nations as a body representing the people of the world, the United Nations must rescind Azerbaijan's recognition as host of COP29 and either find another host country or hold this year's meeting in Bonn, Germany, COP's default meeting place," statement added.

"Azerbaijan was chosen to

host COP29 through an established UN mechanism in December 2023, less than three months after it had overseen the genocide through "ethnic cleansing" of Armenians from the region of Nagorno-Karabagh and following a ten-month-long genocidal blockade of the territory. The exodus from Artsakh — which ended an almost 4,000-year-old continuous presence by one of the oldest Christian communities in the world — was one of the most effective genocides of recent times," the Lemkin Institute stressed.

"To 'celebrate' Azerbaijan's 'victory' against the Armenians of Artsakh, President Aliyev even lit a bonfire in the Artsakh capital of Stepanakert for what he called a 'final cleansing' on the occasion of Nowruz. President Aliyev viewed the choice of Azerbaijan as COP29 host to be an endorsement of his genocidal policies towards Armenians (among other things)," the statement added.

A Mari Usque Ad Mare

FEDERAL INVESTMENT OF \$160 MILLION FOR EXPANDED CONNECTIVITY FOR SASKATCHEWAN

In a recent declaration made by Gudie Hutchings, Minister of Rural Economic Development and Minister responsible for the Atlantic Canada Opportunities Agency, new funding was announced for Saskatchewan, that will total around \$160-million, that will be used to expand and provide high-speed internet access for the communities as well as provide mobile connectivity along remote roads in the province.

“High-speed Internet is no longer a luxury. The federal funding committed today will bring reliable high-speed Internet to up to 13,700 underserved homes in communities across Saskatchewan and provide mobile connectivity along 500 km of roads. It is only fair that communities large and small have a reliable connection so they can grow their potential in this digital world,” said Minister Hutchings.

Jim Lemaigre, Member of the Legislative Assembly for Athabasca, on behalf of Dustin Duncan, Minister Responsible for SaskTel said: “Access to reliable high-speed Internet service empowers people in urban, rural and northern communities by offering vital connections to education, health care, economic opportunities, and family and friends. The Government of Saskatchewan is committed to ensuring that every corner of our province has access to the tools and technologies needed to thrive in the digital age. I thank the Government of Canada for this funding, which will accelerate and enhance the more than \$1 billion in investments that SaskTel is continuing to make to connect more than 225 communities and 85% of Saskatchewan homes to lightning-fast fibre Internet service.”

CANADA INVESTS \$3.3 MILLION FOR CLIMATE EDUCATION INITIATIVE

In a recent press briefing, Steven Guilbeault, Minister of Environment and Climate Change Canada, announced a new investment of over \$3-million, that will be funded through the Environmental Damages Fund’s Climate Action and Awareness Fund and will be used to fund nine new projects, across four provinces and territories all across Canada, to help further develop tools, skills and education to engage with communities about climate change. These projects will also be supporting Canada’s broader climate goals which also includes its goal of achieving net-zero greenhouse gas emissions by 2050.

The projects that will be funded will include increased protection and maintenance of wetlands, and providing workshop that will focus on educating people on various energy efficiency and solar energy options. Additionally there will be community building activities such as planting trees, fruit trees and wildflowers to future attract pollinators, which will promote biodiversity and are essential for the environment. These initiatives will be led by non-government organizations that focus on climate change and also by one university.

“These projects are a clear example of how working together at the grassroots, community level is supporting and educating our youth and ultimately creating a cleaner, more prosperous future for our children and grandchildren. As we continue our celebrations for Canadian Environment Week, this announcement reminds us that we must work collectively to create and maintain a healthy environment that can be enjoyed by all for generations to come,” said Minister Guilbeault.

CANADA TO PROVIDE SUPPORT FOR CANADIANS WITH HEALTH INEQUALITIES

Carla Qualtrough, Minister of Sport and Physical Activity, and Mark Holland, Minister of Health, in a recent press briefing, announced a new investment of more than \$9-million, that will be invested through the Healthy Canadians and Communities Fund, and provided to seven organizations with the goal of supporting healthy living for Canadians. The overarching goal of this investment is to provide adequate support for Canadians that are experiencing health inequalities. The organizations include 80 Cities, Green Communities Canada, National Capital Region Equitable Recreation Network, Outdoor Play Canada, Pheasant Rump Nakota First Nation, Sustainable Calgary Society and Unity Health Toronto.

Minister Qualtrough said: “Our government is working to provide all Canadians with opportunities to get physically active and participate in sport. Through the Healthy Canadians and Communities Fund we are supporting more Canadians who are experiencing health inequalities to develop and maintain good habits that will help them lead healthier, longer, and happier lives.”

“Our government is committed to work alongside community partners to help everyone achieve their optimal health. Today’s announcement will allow many community-centred organizations to offer programming that address the risk factors for chronic disease. The resulting partnerships and built environments will help foster better health through physical activity and have a beneficial impact on communities across the country including the most vulnerable and marginalized among them,” said Minister Holland.

ISHKHAN GHAZARIAN

Yerevan rejects Aliyev’s demand for constitutional changes; accuses him of ‘torpedoing’ peace talks

YEREVAN—The Armenian government rejected Azerbaijani President Ilham Aliyev’s demands for amendments to Armenia’s Constitution, accusing him of “torpedoing” the peace process.

Aliyev, on June 6, reiterated what he called a “precondition” to the eventual peace document, saying that without changes to Armenia’s Constitution, ratifying a peace deal would be “impossible.” Aliyev’s recent comments echoed threats he made in April, days after an agreement was reached on border delimitation that saw Armenia ceding four villages in the Tavush Province.

Aliyev and most recently his foreign minister, Jeyhun Bayramov, claimed that Armenia’s Constitution contains territorial claims from Azerbaijan.

“The Republic of Armenia does not have any territorial claims toward any of its neigh-

bors, including Azerbaijan,” said a statement issued by Armenia’s foreign ministry on June 7.

“The Constitution of the Republic of Armenia and the amendments to it are internal affairs of Armenia, and we consider the attempts by official Baku to intervene in the internal discussions in Armenia as a gross intervention into the domestic affairs of the country,” the statement added.

“At the same time, we believe that such rhetoric torpedoed the peace process and casts doubts on the sincerity of the leadership of Azerbaijan to achieve peace,” the foreign ministry emphasized.

“The negotiated peace agreement clearly states that the parties recognize each other’s territorial integrity and do not have territorial claims against each other. There is also an agreed provision in the draft peace agree-

ment that neither party may invoke its domestic legislation for not implementing its obligations under the peace agreement,” the statement explained.

“The signing of the agreement and the ratification through domestic procedures ultimately will delineate these principles in the agreement. Accordingly, we believe that the clearest and most direct way to address all the concerns by the parties is to sign the agreement, which will open the door to lasting peace between Armenia and Azerbaijan,” added the foreign ministry.

“The peace agreement between Armenia and Azerbaijan is ripe enough for signing, and the Armenian side expresses its willingness to work constructively and intensively to complete and sign it within the next month,” the foreign ministry statement said.

PARLIAMENT...

continued from page E1

The protesters began the march from the city’s central Republic Square where Galstanyan held another massive rally earlier on Sunday. Addressing supporters rallying there, he announced a “decisive” four-day push for a parliamentary vote of no confidence in Pashinyan’s government.

The outspoken archbishop backed by the Armenian opposition demanded that the pro-government leadership of the

parliament convene an emergency session for that purpose. He said the ruling Civil Contract party, which controls the National Assembly, must “obey the will of the people.”

“With our presence, we will not allow them to make yet another anti-state mistake,” he said.

“I want to be sure that this crowd standing here commits to enduring various difficulties for the next four days with persistent efforts, an unwaver-

ing will and a conviction that we are just few steps away from victory,” added Galstanyan.

While insisting on Pashinyan’s resignation and the formation of an interim government, Galstanyan made clear that he is also open to discussing other “possible variants of political solutions.” Speaking to reporters during the ensuing march to the parliament, he did not deny that snap elections are one such solution. He did not comment further.

(RFE/RL)


Ascenseur **Adams** Elevator
Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.**

Eddie, Pedro, Joyce Oughourlian



JARDIN D'ENFANTS SOURP HAGOP

Éducateur/trice de la petite enfance

Sommaire du poste:

Le Jardin d'enfants Sourp Hagop est à la recherche d'un/e éducateur/trice volant/e pour rejoindre son équipe dynamique. L'éducateur/trice sera responsable d'enseigner le français 30 minutes par jour dans chaque local, tout en assurant la planification, l'organisation et la mise en place d'un programme éducatif pour des enfants âgés de 0 à 3 ans.

Fonctions et responsabilités :

1. Faire participer les enfants à des activités afin de stimuler leur développement intellectuel, physique et socio-affectif, tout en assurant leur sécurité et leur bien-être.
2. Planifier et participer aux activités collectives favorisant les apprentissages et le développement physique, cognitif, affectif et social des enfants, tout en apportant soutien, orientation, et en encourageant la coopération et la participation de tous les enfants.
3. Communiquer verbalement de manière efficace afin d'encourager et de stimuler le langage.
4. Diriger les activités de groupes d'enfants en leur racontant des histoires, en leur apprenant des chansons et en leur donnant l'occasion d'exprimer leur créativité par l'art, les jeux de rôles, la musique et l'activité physique.
5. Adopter des approches et des méthodes pédagogiques favorisant le bien-être et la sécurité des enfants.
6. Assurer une surveillance constante de tous les enfants sous sa responsabilité.
7. Évaluer les capacités, les habiletés, les intérêts et les besoins des enfants, et discuter des progrès ou des problèmes des enfants avec leurs parents et la directrice.
8. Exécuter les activités de routine (arrivée, collation, repas, hygiène de l'enfant, habillage, départ) de façon décontractée, rassurante et individualisée.
9. Contrôler l'hygiène en gardant propres et désinfectées les surfaces (table à langer, coin jeu, livres...), afin d'éviter la transmission de maladies infectieuses.
10. Établir et maintenir de bonnes relations avec l'équipe d'éducatrices et la direction.
11. Créer des interactions fréquentes, empreintes de respect et d'affection, auprès des enfants.

Compétences et qualifications requises :

1. Bonne maîtrise de la langue française.
2. Certificat/attestation d'études collégiales en technique d'éducation à l'enfance.
3. Deux ans d'expérience dans un environnement lié à la petite enfance.
4. Le cours de premiers soins, ainsi que la vérification d'absences d'empêchements en lien avec l'emploi, doivent être à jour pour l'embauche.

Horaire de travail : Lundi au Vendredi pour un total de 37,50 heures par semaine.

Faire parvenir votre curriculum vitae ainsi qu'une lettre de motivation d'ici le 12 juillet 2024 par courriel à jardin@jardindenfantssourphagop.com

*Veuillez noter que seules les personnes dont la candidature aura été retenue seront contactées.

ՆՈՐԻԶՈՆ 45
ՇԱՐՔԱՐՔԱՐՔ

«ՀՈՐԻԶՈՆ»Ի 45-ԱՄԵԱԿԻ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՐՈՆՔՕ

Ուրբաթ, 4 Հոկտեմբեր 2024

ԳԵՄՊՐԻԾ

Շաբաթ, 5 Հոկտեմբեր 2024

ՄՈՆԹՐԷԱԼ

Կիրակի, 6 Հոկտեմբեր 2024

ANI BAKERY LTD

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատեր՝ Արսեն Տապապաղեան

Ուր կը գտնէք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝ միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց, պանիրով հաց եւ մենեիշ: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով:

Address: 25 Howden Road, Unit #2, Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, կիրակի մինչեւ կէսօրէ ետք՝ ժամը 2:00 (Երկուշաբթի փակ)

Փորձեցէք եւ
գոհ պիտի մնաք





ADONIS



NOS MAGASINS

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul.Des Sources,
Montréal, QC H8Y 3C5
(514) 685-5050

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

2425 boul.Curé Labelle,
Laval, QC H7V 1R3
(450) 978-2333

225 Rue Peel,
Montréal, QC H3C 2G6
(514) 905-6499

2173 St-Cathrine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
